

իրենց համար անդորր և խաղաղ կեանք մը ապահովելու ձեռնարկ մը կատարելու փորձութիւնը ունենան, իրենց եկեղեցական քայքայուած վարչութեան վերանորոգութենէ վերջ փորձելով ստեղծելու նաև քաղաքական անկախութեան կորիզ մը:

Արդարեւ Ամենայն Հայոց կաթողիկոսութեան աթոռին Էջմիածինի մէջ վե-

(26) Պէտք է զիտել տալ թէ Ամենայն Հայոց կաթողիկոսութեան վերստին Էջմիածին փոխադրելու ծրագիրը մշակողները՝ որպէսզի անկա կրթէր քաղաքական իշխանութեան մը վրայ, այդ իշխանութեան վերահաստատութեան վրայ ալ խորհած են: Դամանակը նպաստաւոր էր: Հայաստանը իրենց միջև կիսող երկու իշխանութիւնները, Գարազոյունեանները և Ազգոյունեանները երկրին բնիկ տարրին՝ Հայերուն վրայ կը վերաբերէին և զայն սիրաշահել կ'ուզէին: Ասոր համար էր որ Ճիհանշահ՝ հովանաւորեց 1441 ի Էջմիածնի ժողովը և Ճիհանկեր՝ աչք զոցեց երբ Ազգամարի կաթողիկոսներ Էջմիածինը զրաւեցին և Հայ թագաւոր մը օժեցին: Նոյնիսկ որոշ է թէ տիրողներու մրցումը և պայքարը առանց նկատի առնելու Հայերը ուզած են Ազգամարի կաթողիկոսներու կրկնակ հեղինակութենէն օգտուել: Ըստ Թովմա Մեծորեցիի Թորգոմեան ազգին փրկութեան ժամանակը հասած էր, Մեծն Ներսէսի տեսիլքին համեմատ, վասնզի Հայոց ազգը բոլոր հոգեւոր շնորհներէ և մարմնաւոր փարթաւութիւններէն զրկուած էր և բարեպաշտական փորձիկ մէկ նշոյլը մնացած էր «յոտն Վարազայ, ի կողմն Հարաւոյ», ուրկէ ոմանք ելած կ'երթան «ի կողմն հիւսիսոյ»: Ասիկա արդեօք ահնարիկ մը չէ՞ Ազգամարի աթոռին կրօնական և քաղաքական իշխանութեան: Այն ատեն հոն կը գահակալէր «ի թագաւորական զարմէ տէր Զաքարիա, որ էր ի յազգէն Գաղկայ թագաւորին»: Զաքարիա (1434-1464), ճարպիկ և զործունեայ անձ, Ազգոյունեան Զիհանկերի բարեկամն էր և իրեն հետ դժուար էր մարառիլ, ուստի հաւանորէն իրեն խոստացան Էջմիածինի աթոռը, բայց վերջը չգործադրեցին: Զաքարիա, իր խաբուելուն վրէժը լուծեց ընտրութեամբ չտրուածը բռնութեամբ զրաւելով՝ պետական ոյժով Էջմիածնի աթոռը յափշտակելով երեք տարի (1461-1464): Իր յաջորդը Ստեփանոս (1465-1489) որ չզարգեցաւ Զաքարիայի ծրագրերը իրագործել աշխատելէ և քաղաքական իշխանութիւն մը ստեղծելու համար հաւանորէն օժեց Սմբատը թագաւոր, թերեւ Զաքարիայի ծրագրերին համաձայն: 1467ին Ստեփանոս ալ բռնի տիրակալեց Էջմիածինի և թերեւս պիտի յաջողէր իր ծրագրերին մէջ՝ եթէ Զիհանշահի (1444-1467) մահը վրայ չհասնէր և ինքն չզրկուէր իր մեծ պաշտպանէն:

Բահաստատուելէն 24 տարի վերջ, Ազգամարի Ստեփանոս կաթողիկոսը (1465-1485) զարմանալի փորձ մը կ'ընէ իր ազգականներէն Սմբատը (որդին Սմբտ Գուռլի բէկ Սէֆէնդլինեանի) օժելով Ազգամարի մէջ «Հայոց քաղաւոր» 1465ին, տարօրինակ համարձակութեամբ մը, անշուշտ տիրողներու մէկ թոյլտուութենէն կամ պատահականութենէ մը օգտուելով:

Սմբատը որ միայն երկու տարի այս տիրոջութիւնը յիշատակուած կը գտնենք, քանի մը յիշատակարաններու մէջ, ապահովաբար Ազգամարի կղզեակէն դուրս ոչ մէկ իշխանութիւն ունեցած է:

Այս ձեռնարկին մէջ, որ գուցէ մրցակցութեան մը²⁶ հետեւանքն է, Ազգամարի կաթողիկոսին և Զիհանկերի անձնական բարեկամութիւնը դեր մը կատարած է, թէեւ այս մասին որոշ փաստ մը չունինք:

Զիհանկերի յաջորդին՝ եղբորը Ուզուն Հասանի (1467-1478) իշխանութեան տակ կը փոխուին բոլորովին տրամադրութիւնները և միահեծանութեան շրջան մը կը բացուի, ուր անկարելի էր որ տոկային այս տեսակ պզտիկ իշխանութիւններ:

Եւ պատահեցաւ անխուսափելին և Սմբատեանց թագաւորութեան շարունակութիւնը կամ ժառանգները ըլլալու յաւակնող այս իշխան՝ կաթողիկոսներու աշխարհիկ իշխանութիւնը այլ եւս չյիշուեցաւ, թէեւ դիտելի է որ Սմբատ «թագաւոր» ի որդին Զաքարիա Դ. (1489-1496) իբր կաթողիկոս գահակալելով Ազգամարի աթոռին վրայ բաժնուած հոգեւոր և մարմնաւոր իշխանութիւնները վերստին կը միանային, և ասոր համար էր անշուշտ որ տակաւին 1478 և 1480 թուականներով յիշատակարաններու մէջ (տես. Յուզակ Չեռագրաց Վասպուրականի, էջ 484 և 514) կը հանդիպինք սա տեսակ բացատրութեան մը, «պահեսցէ անսասուն զաթոռ հայրապետական և թագաւորական մերոյ ազգին»:

ԱՐՇԱԿ ԱՆՊՈՅԱՆՔԱՆ

ԲԵԹԸՖԻ ԶԱՆՏՈՐ

(1823 ՅՈՒՆՈՒԱՐ 1 — 1849 ՅՈՒՆԼԻՍ 31)

(Շար. Բագմ., 1950, թիւ 4-5, էջ 76)

ԲԵԹԸՖԻ ՆԿԱՐԱԳԻՐԸ:

Բեթըֆին անակնկալ երեւոյթ մ'է հունգարական մատենագրութեան մէջ: Ասուպի մը նման եղաւ զալուստը, որովհետեւ ոչ մէկ հեղինակ գուշակել կու տար իր երեւումը, բայց անջնջելի հետքեր թողուց իր ետեւէն:

Հունգարական պատմութեան զարթոնքին ամենաբարդ շրջանին ապրեցաւ, երբ մեծ մարդոց հոյլի մը առաջնորդութեամբ ազգը ինքնագիտակցութեան կը հասնէր և անկախութեանը համար պայքարել կը սկսէր: Այդ պայքարին ամէնէն ցայտուն դէմքերէն է Բեթըֆին և անտարակոյս ամէնէն հաւատարիմ պատկերացնողը իր քերթուածներով:

Այսօր դարու մը հեռաւորութենէն դիտելով, կը նկատենք իր մէջ այն բացառիկ անձնաւորութիւններէն մին, որոնք ազգերու պատմութեան մէջ կ'երեւին և սահմանուած են այդ ազգին պատմութիւնը յեղաշրջելու և նոր ճամբաներէն քաշելու: Ու ինք զգաց իր այդ առաքելութիւնը: Ինքզինք նկատեց միշտ նախաւորութեան մարդը և այդպէս տպաւորուած արտադրեց: Ոչ ոք իրմէ աւելի ձիրքերով օժտուած էր այդ առաքելութիւնը գլուխ հանելու համար:

Միլիոններու զգացումները կը կրէր իր սրտին մէջ և միլիոններու ախորժած լեզուով արտայայտեց անոնց ուրախութիւնները, տառապանքները, փափագները և ձգտումները: Անթիւ մարդիկ իր մէջ գտան իրենց զգացումներու թրթռացումները,

մարդկային յաւերժական փափագներուն և դէպի լոյս ձգտումին հաւատարիմ թարգմանը, ու մանուկը թէ ծերունին՝ սիրեցին անոր քնարերգական թեւերուն վրայ դէպի եթերը բարձրանալ արեւին մէջ լոգանք առնելու և կամ իջնելու իրենց տառապանքներու ծովին խորը, միշտ գտնելով Բեթըֆինի մէջ այդ հակոտնեայ զգացումներուն հարազատ թարգմանը: Ասկէ իր քերթուածները գերեցին միտքերը, նոր աշխարհ, նոր կեանք փթեցուցին նոյնիսկ անտարբերներու սրտերուն մէջ, ու նոյնիսկ առօրեայ մարդը, սովորութեան ստրուկը հարուածուած իրեն թմրած եսասիրութեան մէջ, ելաւ իր սահմանափակ շրջանակէն և լծուեցաւ ազգային բարօրութիւնը ապահովելու սրբազան գործին, ուսած իր քերթուածներէն՝ թէ ազգին բարօրութիւնը անհատներու բարօրութիւնը կը նշանակէ:

Ահա այս մարդը կազմող բացառիկ ձիրքերը:

Բեթըֆինի մէջ նախ և առաջ դուրս կը ցայտի անոր ուժեղ անհատականութիւնը: Այդ անհատականութիւնը կերտելու համար միացան վարվուուն և բացառիկ միտք մը, անսահման երեւակայութիւն մը, յաւատեւ թրթռացող սիրտ մը և խորթաբանաց աչքեր, որոնցմով ամէն բան կը տեսնէ, ամէն բանի կը հետեւի և կը վե-

նեւ: Ստուգիւ ըլլայ իր ոճին, ըլլայ իր կեանքին մէջ կը նմանի վայրի գեղեցիկ ծաղիկներուն, որոնք թէեւ բուրաստանի ծաղիկներուն ներդաշնակ ինամուածութիւնը չունին, բայց ուր ալ իրենց զուլը դուրս ցցեն՝ ազատ գեղեցկութեան և գեղեցիկ ազատութեան մը շունչը կ'արձակեն չորս կողմ:

Իր բերթուածներուն շատերը նոր էին նաեւ բովանդակութեան նայելով: Դահլիճային ու նոյնիսկ դասական լաւ հեղինակները արհամարհած կամ անտեսած էին նիւթեր, որոնք իր մէջ վարպետ պատկերահանի հանդիպեցան: Նախ և առաջ անվերապահ կը սիրէ Բուսոնը՝ հունգարական միօրինակ հարթավայրը՝ իր ծննդավայրը. անոր յարափոփոխ կերպարանները երկինքի խաղերու համաձայն. կը սիրէ նոյնպէս անոր բնակիչները և առարկաները՝ հարազատներու պէս: Իր քերթուածները երբ կարդաք՝ ձեր դիմացէն շարժուն պատկերի մը պէս կ'անցնին անոր զանազան տեսարանները, ձիարածը՝ որ քամիներու հետ մրցելով կը սուրայ, մամլիկը տարիքէն կըրած դրան սեմին վրայ իրիկը ձեռքին, աւազակը, գինետունը, երաժիշտ փոշան... անոնց յատուկ պարզ բայց արտայայտիչ լեզուով, արտայայտուելու եղանակով, թարմութեամբ: Յետոյ կը տեսնէք Բուսոնի որ կէսօրուան տաք արեւուն տակ կրկնեցնելովներ կը ծնի, ուր հանդարտ իրիկնադէմին կ'երգեն մամիկները դարաւոր օրօրը. որ յանկարծ կ'ամպրոպի և անդիմադրելի տարերային պայքարի ուկէան մը կը դառնայ, փութով անապակ երկինք մը վերգեցնելով և դառնալով աւելի զուարթատեսիլ քան առաջ: Իր անթիւ պատկերներուն անսպառ մթերանոցն է նաեւ այդ Բուսոնը: Հուսկ Բուսոնայի ազատ զաւակն է և անծիր Բուսոնային պէս ազատութիւնը կ'երգէ և այդ ազատութիւնը նաեւ ուրիշներու մէջ արթնցնելու հարկը կը զգայ:

Ժողովրդական հէքեթներն ալ լաւ կը

ճանչնայ և «Յովհան Սպեո» ու, անոնց մէջ առաջնակարգ դիւցազնավէպ մը կը հիւսէ: Իր հոգեկան վիճակին հաւատարիմ պատկերն ալ տուած է Գիթ Ստեփան մէջ:

Իր պարզութիւնը յայտ կու գայ նաեւ գեղեցիկին ըմբռնումին մէջ: Հակառակ որ ընդարձակ մշակոյթի տէր էր, յղկել, ներբացնել չունի, կ'երգէ աղուոր բաներ ամէնուն համար և ամէնուն մատչելի լեզուով:

Սրտայայտուելու իր նախընտրած ձեւը պատկերն է: Սնուպառ բով մըն է իր միտքը նորանոր զգացումներուն կամ մտածութիւններուն՝ նորանոր, ինքնատիպ բայց տեղին ճիշտ յարմար պատկերներ յղանալուն մէջ: Ու անոնք այնքան համոզիչ կը խօսին ընթերցողին սիրտին, միտքին ու աւանջին, որ այս տեսակէտով միջազգային ոճ է մեծ հեղինակի հետ կարելի է բաղդատել:

Ամփոփելով կրնանք ըսել՝ Բեթլֆին կաշկանդող օրէնքները անտեսող այն հանձարեղ բանաստեղծութեան լաւագոյն ներկայացուցիչներէն է, որ բնական ոճով կը հետեւի իր հոգին բերապատիկ շարժումներուն:

ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆՈՒԹԵԱՆԸ ԵՒ ԱԶԳԵՑՈՒԹԵԱՆԸ ԳԼԽԱՌՈՐ ՊԱՏՃԱՌՆԵՐԸ

Բեթլֆին Հունգարիոյ ամէնէն ժողովրդական բանաստեղծը կը մնայ մինչեւ այսօր: Իր մահէն վերջ յիսուն տարիներ անընդհատ, հունգարացի լաւագոյն քերթողները քալեցին իր և ժամանակակից Արանյ Եանոշին գծած ուղիէն¹: Ասոր գաղտնիքը գլխաւորապէս իր քերթուած-

(1) Բացի Իմրէ ՄԱՍՍՁԷՆ (1823-1864) որուն «Մարդուն ողբերգութիւնը» բացառիկ երկոյթ մըն է հունգարական մատենագրութեան մէջ, Լե Եանոշ ՎԱՅՏԱ (1827-1897)՝ յոռետես բանաստեղծէն, որ ընկերարանական նիւթերու վրայ գրած է ընդհանրապէս:

ներուն պարունակութեանը մէջ փնտռելու ենք, որ կ'ընդգրկէ մարդկութեան բոլոր ապրումները, հունգարական գոյնով մը պճնած:

Ուղիղ հոգիները հետաքրքրող ամէն առարկայ հետաքրքրած է նաեւ զինքը. ընտանիքին և օճախին սէրը իր հազարամէկ արտայայտութիւններով, յարգանքը դէպի բարեկամութիւնը, սէրը մարդկութեան և յատկապէս իր ազգին զաւակներուն հանդէպ, սէրը կնոջ՝ որուն մէջ առաջին պահէն կ'իշխէ ամուսնութեան և ընտանեկան հաւատարմութեան հեռանկարը, նոյնիսկ մահունէն վերջ և աւօրեայ կեանքը իր անսպառ փուլերով: Կը գտնենք քովը նոյնպէս մարդկային մեծ ընտանիքին և մասնաւորապէս իր պաշտած Հունգարիոյ պայքարը, ըմբոստացումը ամէն ընկերային անիրաւութեան դէմ, անշէջ ատելութիւնը ամէնազգի բռնակալութիւններու դէմ և մարդկային արժանապատուութիւնը կաշկանդող ամէն նիւթական և բարոյական կապանքներու դէմ: Կը հաւատայ թէ պիտի յաղթանակեն վսեմ գաղափարները, ինչպէս ազատ հայրենիքի, ազատ խօսքի և գործի գաղափարները:

Իր ժողովրդականութեան երկրորդ պատճառը, իր բանաստեղծութեան հրապուրիչ ուժին մէջ փնտռելու ենք: Կը զգայ և զգալ կու տայ: Զգացումներու և երեւակայութեան ջերմութիւնը, նկարչագեղ երաժշտականութիւնը իր քերթուած-

ներուն, հուսկ բեմադրութեան յստակութիւնը, մայիսեան առաւօտի մը լուրթ երկինքին անդիմադրելի հրապոյրը ունին:

Իր ժողովրդականութեան մեծագոյն պատճառներէն է անշուշտ ազգային ազատամարտին անձնապէս մասնակցութիւնը և իր փառահեղ մահը փառքի դաշտին վրայ: Ազգային ազատագրումի անհամբեր սպասող երիտասարդութեան մտատիպարը եղաւ և կը մնայ իր կրակուբոց երգերով: Անձնական և ազգային անհամբերութիւնը հնչեցուց ցնցիչ տողերով: Ինչպէս տեսանք ինքզինք նկատեց միշտ զարթոնքի գաղափարներու յաղթանակին համար աշխատող առաքեալ մը և տեսակ մը մարգարէական նախազգացումով մօտեցող փութորիկին փայլատակումներն ու որոտները լսեցուց: Կարելի է ըսել թէ իր ազգը իր լսեցուց: Կարելի է ըսել թէ իր ազգը իր քերթուածներուն թեւերուն վրայ առած ու տարած է դէպի ազգային մեծ ողբերգութիւնը: Հուսկ մարտիրոսանալով այդ պայքարին մէջ, այն ազգային դիւցազնեութեւ կարգը անցաւ, որոնց վերադարձին կը սպասէ հունգարացի ժողովուրդը իր երազած փառաւոր և ամբողջական ազատութիւնը ձեռք ձգելու համար:

Ան կարմիր վարդանի պէս մարմնով ոչնչացաւ անհաւասար պայքարի մը մէջ, բայց անոր նման ապահովեց գաղափարական յաղթանակ մը, որ դարէ դար միշտ աւելի պիտի փայլի հունգարական երկնակամարին վրայ:

Հ. ՅՈՒՍԻԿ ՊՈՒՇԼԻԿԵԱՆ